«Նարիենա» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմաններին համաձայնություն տալու վերաբերյալ

2019-03-22

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/160 Ա

22.03.2019

«Նարիենա» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմաններին
համաձայնություն տալու վերաբերյալ

ՈՒսումնասիրելով «Նարիենա» ՍՊԸ գրավատան (այսուհետ՝ նաև գրավատուն) կողմից 2019 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմանները (նոր խմբագրությամբ) և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համաձայնություն տալ «Նարիենա» ՍՊԸ գրավատան կողմից 2019 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմաններին (նոր խմբագրությամբ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ